ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Ա Զ Դ

Բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի կտակին տրամադրութեան համաձայն՝ Սահակ - Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի յաւուր տօնի Սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ։

Հետևապէս՝ այն ամեն հեղինակք ու բանաստեղք որ ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ ո՛ և է երկասիրութեամբք կը փափաքին մասնակցիլ սոյն մրցանակաբաշխութեան, կը հրաւիրուին մինչև յառաջիկայ տարւոյ Յունվարի սկիզբն յուղարկել առ Մեն. Սրբազան Պատրիարք Հայրն ի Կ. Պոլիս իրենց աշխատասիրութիւններն։

Տպագրեալ երկասիրութիւնք երեք օրինակ պէտք է յուղարկուին, իսկ ձեռագիրք մի օրինակ որք չեն տրուիր։

29 Յունիս 1892.